# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 127

ք. Երևան

24 .06.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 4-րդ չափաբաժնին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Եփրեմ Մկրտչյան Արշակի Ա/Ձ-ն /ՀՎՀՀ՝ 72981023, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Կոմիտասի 65 շենք, բն. 41 (այսուհետ՝ Մասնակից)/:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է ընտրված մասնակից: Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Եփրեմ Մկրտչյան Արշակի Ա/Ձ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ գնահատող հանձնաժողովի 10.06.2024թ.-ի որոշմամբ վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ Եփրեմ Մկրտչյան Արշակի Ա/Ձ-ն, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝

Եփրեմ Մկրտչյան Արշակի Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ